ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Դասալքության եւ զինաթափման խնդիրը. Թուրքական կառավարությունը Առաջին աշխարհամարտի սկզբից եւեթ տենդորեն նախապատրաստվեց կենսագործելու հայերի բնաջնջման դիվային ծրագիրը՝ դասալքության եւ զինաթափման գործում ցույց տալով չափազանց մեծ եռանդ:

Զինվորագրության հետեւանքով հայ երիտասարդության մեծագույն մասը թեեւ ենթարկվել էր հաշվառման, բայց զանազան պատճառներով դեռ բանակ չէր զորակոչվել: Ուսուցիչները, կրթական գործը չխափանելու համար ժամանակավորապես զերծ էին մնացել զորակոչից, ստացել էին ժամանակավոր «վէսիքաներ» (ազատության թուղթ) եւ դարձել էին քաղաքապահներ, պայմանով, որ շաբաթը երեք անգամ ներկայանան Վանի կառավարչատուն: Արհեստավորները զորանոցներում բանակի համար հագուստներ էին կարում, հոգում էին այլ կարիքներ եւ Վանից դեռ չէին հեռացել: Մեծահարուստներից ոմանք զինվորական փրկանք վճարելով, ազատության թուղթ էին ստացել, իսկ որոշ զինվորացուներ թաքնվել էին:

Զորահավաքը եւ թուրքական բանակի կենտրոնացումն ընթանում էին ծանր պայմաններում, քանի որ ոչ ոք բանակ գնալ չէր ուզում: Բանակ զորակոչված առաջին զինվորներին բաժին հասած աղետը բավարար էր զգուշացնելու մնացած հայ երիտասարդներին՝ խուսափելու զինվորագրումից: Բացի այդ, զորակոչիկներին չէին ապահովում սնունդով, քանի որ հավաքագրման կետերում չկային պարենային պահեստներ, իսկ նորակոչիկների տեղափոխումը տեղից-տեղ իրականացվում էր հետեւակ վիճակում՝ ժամում 3 կմ արագությամբ[1]:

Միաժամանակ, թե՛ սեֆեր-բերլիկը (զորահավաքը) եւ թե՛ թեքեալիֆիհարպիեն (պատերազմական տուրքը) անողոք էին[2], իսկ դրանց կարգադրությունը հայերը համարում էին անիրավացի, քանի որ շատ տեղերում աշխատող ձեռքեր բոլորովին չէին մնում: Ոմանք, ելնելով իրենց ընտանիքների տնտեսական վատթար եւ անապահով վիճակից եւ տեղյակ լինելով բանա-

1 Տե՛ս **Е. Ф. Лудшувейт**, Турция в годы первой мировой войны 1914-1918 гг., военно-политический очерк. М., 1966, էջ 50:

2 Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Ա. Հարությունյան**, Սեֆեր-բերլիկը, թեքեալիֆի հարպիեն եւ դասալքության խնդիրը Վան-Վասպուրականում 1914-1915 թթ., Էջմիածին, 2011, Դ., էջ 29-46:

կում գտնվող քրիստոնյա զինվորների ահավոր դրությանը, խուսափում են զինվորական ծառայությունից եւ որոշում են գաղթել ու հեռանալ հայրենիքից:[3] Այդ մասին բնութագրական է Օն. Մխիթարյանի գնահատականը. հայ չարքաշ գյուղացին կամ աշխատավոր զինվորը «թողած էր իր կալն ու հունձը եւ հրացանը առած կանգնած էր իր պարտականութեան գլուխը, բայց ահա, իր աչքի առջեւ, կը կողոպտուէր ու կը մոխրանար իր հայրենի գիւղը, կը կոտորուէին կամ վտարանդի կը դառնային իր հարազատները, կը զինաթափուէր եւ անհետ կը կորսուէր իր ընկերը եւ իր ցեղի գլխուն կը պատրաստուէր անագորոյն փոթորիկ մը՝ նիւթուած անոնց իսկ կողմէ, որոնց համար իր կեանքը զոհելու եկած էր ինքը»[4]:

Այդ պատճառով, հայ զորակոչիկները մի շարք տեղերում սկսեցին խուսափել զինվորական ծառայությունից, «որը հանդիսանում էր բնական հետեւանք օրէնք խախտող անարդար կարգադրութեան»[5]:

Դասալքության դիմելու իրավունք ուներ նաեւ արդեն թուրքական բանակ զորակոչված անհավասար, խտրական եւ ստորացուցիչ պայմաններում գտնվող հայ զինվորը: «Սկսուած զօրահանութիւնը,- նշվում է Վանի Առաջնորդարանի 1914թ. սեպտեմբերի 27-ի տեղեկագրում,- բնական էր, որ խրտչեցնէր շատերը, մանաւանդ Հայերու պէս զինուորական կեանքի իսպառ անվարժ ժողովուրդը, ուստի բնական էր, որ ամէնքը անմիջապէս չպատասխանեցին զօրակոչին կամ զինուորագրուելէն յետոյ դասալիքներ գտնուէին»[6]:

Ուստի, շատերը քաշվում էին ասպարեզից, խուսափում զինվորական ծառայությունից եւ թաքնվում: Խույս էին տալիս ոչ միայն քրիստոնյաները, այլեւ մահմեդականները:

Դասալքությունը սկսվեց գլխավորապես ճանապարհների եւ խրամատների վրա աշխատողների շարքերում, ուր հայ զինվորը ֆիզիկական զրկանքների հետ միաժամանակ, կրում էր նաեւ բարոյական տառապանք:

Այդուհանդերձ, զենք կրող հայ զինվորները, մինչեւ Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունների սկիզբը շատ քիչ դասալիքներ տվեցին: Սակայն այդ ամենի հիման վրա իշխանություններն առաջ քաշեցին դասալքության մասին շինծու հարցը:

Դասալքության «ծրագիրը» կենսագործելու պատեհ առիթ հանդիսացավ ռուսական զորամասերի մուտքը սահմանամերձ Սարայ գյուղաքաղաք, իսկ այնուհետեւ թուրքական բանակի պարտությունը Սարիղամիշի եւ Քյոփրիքյոյի մոտ՝ 1914թ. նոյեմբեր-դեկտեմբերին: Բնականաբար, գտնվեցին դասալիքներ: Զինվորները «...ամբողջ խմբերով սկսեցին փախչել գործող բանակներից ու պահեստից եւ թաքնուել լեռներում ու գիւղերում»: Հակառակ

3 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1914 մայիսի 18, թ. 106:

4 **Օն. Մխիթարեան**, Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 15:

5 **Ա-Դո**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, Երեւան, 1917, էջ 70:

6 **Զաւէն Արքեպս.**, Պատրիարքական Ցուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրե, 1947, էջ 52:

ջիհադին, «փախչում էին թէ՛ հայերը, թէ՛ քրդերը, թէ՛ թուրքերը, բայց տոկոսային յարաբերութեամբ՝ հինգ փախչող թուրքին՝ մի հայ հազիվ էր ընկնում»: Իսկ այն տեղերում, որտեղ բանակում հայերը շատ չնչին տոկոս էին կազմում, «փախչողները բացառապէս թուրքերն էին լինում եւ մեծ չափով»[7] եւ «թերեւս քանի մը հարիւր» հայ զինվորներ[8]: Իսկ «քիւրդ դասալիքները խմբերով կը վխտային լեռնային գաւառները»[9]: Բերկրիում, Բայազետում եւ Սարայում կազմալուծման ենթարկեցին թուրքական կանոնավոր զորքերը: Ճիշտ է նկատում Ա. Վռամյանը, երբ նշում է. «Երբ այսօր Ճիհատի կոչին կ՚անսաստեն բուն իսկ իսլամները, փախուստ տալով պատերազմի դաշտէն, անիրաւութիւն մը եւ անարդարութիւն մըն է դասալիք անունը տալ հայ զինուորին, որուն կը զլացուի էական ըստորոգելիքը իր պարտականութեան, որ զէնքն է»[10]:

Բանն այն է, որ Կովկասյան ճակատում թուրքական զորքերի ձախորդությունների պատասխանատվության մեծագույն մասը վերագրվում էր քրիստոնյաներին եւ մասնավորապես հայերին: «Թրքական մամուլը,- նշում է Ռընե Բինոնը,- սկսաւ Հայերու վրայ յարձակիլ, ամբաստանելով զանոնք դաւաճանութեան, լրտեսութեան եւ ըմբոստութեան մէջ: ... Կամաց կամաց կը պատրաստէին հանրային կարծիքը այն տռամներուն, որոնք պիտի արիւնաներկէին Կայսրութիւնը»: Մեջբերելով թուրքական «Քարագյոզ» երգիծական պարբերականից տեղեկություն՝ նա ավելացնում է. «Հայերու դէմքը կացութեան չափանիշն է, երբ որ ուրախ է, ուրեմն Դաշնակիցներու գործերը լաւ ճամբու մէջ են, երբ մթագնած է, ուրեմն գէշ կ՚ընթանան»: («Եթէ կ՚ուզէք գիտնալ թէ ինչ է պատերազմին ընթացքը, միայն Հայու մը երեսը նայեցէք: Եթէ ան կը ժպտի, կը նշանակէ որ՝ Դաշնակիցները կը յաղթեն: Եթէ երեսը ծուռ է, կը նշանակէ որ՝ Գերմանները կը յաջողին»)[11]:

Մինչդեռ թուրքերը հավատում էին, որ Վանի հայկական նահանգների հայ զինվորներից շատերը դասալիք էին դարձել, անցել էին սահմանագիծը, միացել էին ռուսական բանակին եւ ճանապարհներին ու ընդհանրապես երկրին իրենց ծանոթությունը կարեւոր ազդակ էր հանդիսացել ռուսական զորքերի հաղթանակների համար:

Մատների վրա կարելի էր հաշվել այն հայերին, որոնք զենք վերցնելով անցել էին ռուսական բանակի կողմը[12]: Օրինակ, Բաշկալեի եւ Սարայի շրջաններում ռուսական բանակի կողմն անցած հայ զինվորների թիվը հարյուրից չէր անցնում, բայց սրի քաշվեցին մի շարք գյուղերի հայ բնակիչները:

---

7 **Արամայիս**, Զարհուրելի ոճիրը. Մուշ-Սասուն. բեկորներ իմ յուշերից – Վան-Նիկոլը-Կարսն ու Մարսն, Բագու, 1916, էջ 1-2:

8 **Զ. Դարյան**, Արծիվ Վասպուրականի, Երեւան, 1965, էջ 252:

9 **Հ. Կոստյեան**, Վան-Քաղաքամիջի ապրիլեան կռիւները, Երեւան, 1992, էջ 15:

10 ՀԱԱ, ֆ. 227, գ. 416, թ. 54-58, նաեւ «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թ. 6, էջ 98-100, նաեւ **Օն. Մխիթարեան**, Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 28-34:

11 Տես **Ռընէ Բինոն**, նշվ. աշխ., Կ.Պոլիս, 1919, էջ 20-21, նաեւ «Ամերիկեան դեսպան Մր. Մորկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները», Կ.Պոլիս, 1919, էջ 245-246:

12 Տես ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թթ. 27-34:

Այն, որ հայ դասալիքների թիվը շատ քիչ էր, վկայում են նույնիսկ Ռ. Բինոնը[13], Հ. Բարբին[14], Լ. Բրայսը[15] եւ Հ. Մորգենթաուն[16]:

Այնուամենայնիվ, թուրքերը պարտության ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա, իսկ թուրքահայ զինվորները, տեսնելով իրենց առաջ կանգնած ռուսական զորքերին եւ նրանց շարքերում կռվող հայ կամավորներին, «ձեռքը սկսեց անզօրանալ, չը կրակել իր հարազատի վրա, ձգել զօրքի շարքերը, յաճախ անցնել նաեւ ռուսական բանակը»[17]:

Ամեն անգամ դասալքության հարցը քաղաքական եւ քարոզչական նպատակներով օգտագործվում էր հայերի եւ ոչ թե դեպի թիկունք փախած թուրքական զինվորների դեմ, որոնք զբաղվում էին զանգվածային կողոպուտով եւ սպանություններով:

Կ. Պոլսի պատրիարքարանին ուղղված Բաղեշի առաջնորդարանի 1914 թ. հոկտեմբերի 13-ի թիվ 126 նամակը, հերքելով թուրքերի տարածած հերյուրանքները, գրում էր. «Սրբազանը մեր նամակին մէջ կը յիշէր նաեւ Վանէն 250-է աւելի հայ զինուորներու իրենց զէնքերով Ռուսաստան անցնիլը: Առաջնորդարնս մանաւանդ այժմու կացութեան մէջ իր սահմանակից առաջնորդարաններու հետ շարունակ յարաբերութեան մէջ լինելով, ինչպէս որ է Վանը, ո՛չ պաշտոնական եւ ո՛չ անպաշտոն կերպով այս մասին ոեւէ տեղեկութիւն չունինք, եւ հետեւաբար այս լուրին ալ սխալ լինելը հաղորդեցինք Սրբազանին»[18]: Դրանք մասն էին կազմում այն 20000 արեւմտահայերի, որոնք պատերազմից շատ առաջ, կոտորածներից խույս տալու նպատակով, ապաստանել էին Կովկասում եւ չէին կարողացել վերադառնալ իրենց հայրենի օջախը՝ նրանց նկատմամբ սահմանադրական Թուրքիայի վարիչների բացարձակ թշնամական վերաբերմունքի հետեւանքով:

Իսկ Օսմանյան խորհրդարանի՝ Վանի երեսփոխան Ա. Վռամյանի՝ Թուրքիայի Ներքին գործերի նախարար Թալյաթին հղած 1915 թ. փետրվարի 14-ի ծածկագիր հեռագրի մեջ ապացուցվում էր, որ ռուսական բանակի մեջ պատերազմից առաջ Ռուսաստան անցած արեւմտահայերից ընդամենը 1000 մարդ կար, որից 200-300-ը՝ Վանից փախածներն էին[19]:

Սակայն, այդ ամենը կանխամտածված դրսեւորում չէր, այլ պատահական ու անհատական: Հայ ղեկավար շրջանները ոչ միայն չէին խրախուսում այդ երեւույթը, այլեւ արեւմտահայերին թելադրում էին քաղաքացիական

13 Տե՛ս **Ռընէ Բինոն**, Հայերու բնաջնջումը. գերմանական մէթոտ-թրքական գործելակերպ, էջ 20:

14 Տե՛ս **Հանռի Պառպի**, Սարսափի երկրին մէջ. Նահատակ Հայաստան, Կ.Պոլիս, 1919, էջ 87:

15 Տե՛ս **Լօրտ Պրայս**, Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա. մաս, կազմեց Վահան Միրազենց, Կ.Պոլիս, 1920, էջ 104-105:

16 Տե՛ս «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները», էջ 246:

17 **Ա-Դո**, Մեծ դէպքերը Վասպուրականում, էջ 86:

18 **Զաէն Արքեպս.**, Պատրիարքական Յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, էջ 69:

19 Անդ:

պարտքի անշեղ կատարում եւ կոչ էին անում «հայ գիւղերուն հնազանդ մնալ եւ քրիստոնէաբար տանիլ չարչարանքի լուծը»[20]:

Նոյնիսկ Կովկասի փոխարքա, կոմս Վորոնցով-Դաշկովը հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե.- ին ուղղված 1914 թ. սեպտեմբերի 2-ի թիվ 1569 իր նամակում էր նշում, որ «ծայրահեղ անցանկալի եւ նոյնիսկ վտանգավոր է, ինչ-որ ապստամբություն առաջ բերել թուրքահայերի շրջանում»[21]:

Հայերի ղեկավար կազմը՝ առաջնորդներն ու դաշնակցական կոմիտեները, որոնք 1914թ. օգոստոսին ընդհանուր ժողով էին գումարել Էրզրումում, հրապարակավ հայտարարեցին Օսմանյան պետությանն իրենց հավատարմութեան մասին եւ քննության առնելով իրավիճակը՝ գտան, որ պետք է կռվել Օսմանյան Թուրքիայի պաշտպանության համար, եթե այն վճռի մասնակցել պատերազմին, հարազատորեն կատարել «այլասերման» հասած քաղաքացիական պարտքը հայրենիքի ու կառավարության հանդեպ եւ խրախուսել ժողովրդին՝ առանց դժգոհելու տալ հարկեր ու զորակոչիկներ:

Միաժամանակ, Վանի Ազգային Առաջնորդարանը, Օսմանյան խորհրդարանի երեսփոխան Ա.Վռամյանը, ինչպես նաեւ 1914թ. հոկտեմբերի 10-15-ը Վանում կազմված միջկուսակցական խառն խորհրդաժողովը, որը քաղաքային ժողովի հետ պիտի վարեր ազգային գործերը, յուրաքանչյուրն իր իրավասության եւ դիրքի մեջ համագործակից, ամեն կերպ «կը ջանային պահել յարաբերութիւնը կառավարութեան եւ ժողովրդի միջեւ» եւ «... ամէն հնարաւոր միջոց կիրառելով չձգտելու յարաբերութիւնները կառավարութեան եւ հայ ժողովրդի միջեւ»[22]:

Վերսկսվեցին առժամանակ ընդհատված ժողովներն ու խորհրդակցությունները, որոնց համար հավաքավայր ընտրվեց Այգեստանի Նորաշեն թաղամասի Ս. Աստվածածին եկեղեցին: Այդ խորհրդակցություններին մասնակցում էին բոլոր դասակարգերի ներկայացուցիչները:

Որոշվեց կազմել պատվիրակություն՝ Ա. Թերզիբաշյանի եւ Գ. Չիտեջյանի գլխավորությամբ եւ համաձայնության եզրեր գտնել կառավարության հետ: Իր կողմից առանձին, որպես թուրքական խորհրդարանի անդամ, պիտի աշխատեր նաեւ Ա. Վռամյանը:

Սակայն, Ջեւդեթն անդրդվելի էր: Նա «հաճոյքով կը լսէր Վռամեան էֆէնտիի խելացի խորհուրդները եւ խնդրանքները, կը խոստանար օգտուիլ անոր թելադրութիւններէն», բայց ամեն անգամ տեսակցություններից հետո առաջարկում էր, որ «Վռամեան Էֆէնտին իր հեղինակաւոր ազդեցութիւնը ի գործ դնէ հայ դասալիքները իրենց պարտականութեան գլուխը բերելու համար»[23] եւ «զինուորցուները կը պահանջէր՝ առանց ամենադոյզն երաշխիքի»[24]:

20 **Օն. Մխիթարեան**, Վանի հերոսամարտը, էջ 25:
21 Տե՛ս ՀԱԱ, (Կուսարխիվ), ֆ. 4056, ց. 1, գ. 15, թ. 1:
22 **Հ. Կոսյեան**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, էջ 16:
23 **Ա. Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890-էն 1940, Երեւան, 2003, էջ 158:
24 «Յուշեր Արմենակ Եկարեանի», Գահիրէ, 1947, էջ 185:

Իրապես Ա. Վռամեանն էլ, Արամն էլ շատ ջանք էին թափում, որ «չափով մը գոնէ գոհացում տային կառավարութեան պահանջին»[25]:

Այն ժամանակ որոշվեց, որ զինվորների մի մասը գնա հանձնվի «որպես գիտակից ու կամաւոր զոհաբերութիւն»: Գոնէ կառավարութեան պահանջած 4000-ին փոխարէն 7-800 դասալիք ետ դարձնենք»[26]: Եւ որպեսզի նրանք քաջալերվեն, որոշվեց, որ նրանց ընկերանաւ Ա. Թերզիբաշյանն ու ռամկավար Հ. Գույումճյանը:

Սակայն, այս ամենը տեղի չունեցավ Բերդակի դեպքերի պատճառով:

Իր հերթին պատրիարքը, Ա. Վռամյանը եւ ուրիշներ շրջաբերական նամակով կոչ էին անում արեւմտահայերին, ինչպես գավառներում, այնպես էլ մայրաքաղաքում լինել շրջահայաց եւ զգույշ, օժանդակել, հավատարիմ մնալ եւ ենթարկվել թուրքական պետությանը եւ որպես օսմանյան նվիրյալ հպատակ, «չխնայէ մինչեւ իսկ իր կեանքը, եթէ հայրենիքը պէտք ունի անոր»[27]: Վանից եւ Էրզրումից ստացված պատասխան գրություններում հաստատում էին նրանց ցանկությունը: Վանի առաջնորդարանից ուղարկված պատասխան հեռագրում մասնավորապես նշվում էր. «Հեռագիրնիդ ստացանք, ձեր հրահանգին համաձայն պէտք եղած յորդորները կարդացինք: Վանայ Հայուն մեր սիրեցեալ հայրենիքին հանդէպ ունեցած հաւատարմութիւնը եւ ըրած զոհողութիւնները հնուց ի վեր ապացուցուած են: Ջօրակոչին եւ ներկայ պատերազմի ընթացքին եւս արդէն օսմ. զահուն յարգանքին եւ պարծանքին բարձրացմանը նիւթապէս, բարոյապէս եւ անձով ամէն տեսակ զոհողութիւններ ընելու վրայ ենք եւ ասկէ ետք ալ նոյն զոհողութիւններու պատրաստ ենք»[28]:

Վանի եւ շրջանի հայությունը բնավ ապստամբելու նպատակ չի ունեցել եւ ոչ էլ առանձին պատրաստություն էր տեսել: Բանն այն է, որ Վանում տարիներ շարունակ գործունեություն ծավալած եւ, առաջին հայացքից, իրենցից կազմակերպված ուժ ներկայացնող հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես դաշնակցության տեղական կազմակերպությունները ապստամբություն բարձրացնելու, թուրքական բանակին թիկունքից հարվածելու եւ ոչ մի գործնական մտադրություն չունեին:

Դաշնակցական ղեկավար գործիչների խոստովանությամբ, պատերազմի նախօրեին «Վանէն մինչեւ Կիլիկիա» ապստամբական «հոգեբանութիւնը գոյութիւն չունէր, այսպիսի ծրագիր մը գծուած չէր: Հայութիւնն ու Հ.Յ. Դաշնակցութիւնն այսպիսի ձեռնարկ մը գլուխ հանելու համար պատրաստուած չէին: Երկվութիւնը եւ տատանումը մնացին իրենց ուժին մէջ»[29]:

---

25 **Ա. Դարբինեան,** Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890-էն 1940, էջ 158:

26 Անդ:

27 **Ս. Ակունի**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, էջ 16:

28 Անդ, էջ 17, Վասպուրական, Վան-Վասպուրականի Ապրիլեան Հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915-1930, Վենետիկ, 1930, էջ 21:

29 **Կ. Սասունի**, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետութեան տակ (1914-1918). Տաճկահայ գաղթաշարժը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 25-26:

Իթթիհատ-դաշնակցական համագործակցությունը, որ Սահմանադրությունից ի վեր շարունակվում էր մինչեւ պատերազմի նախօրյակը, «ամլացրել» էր այդ կուսակցությունը եւ դարձրել նախաձեռնությունից զուրկ, հասունացող իրադարձությունների ետեւից ընթացող մարդկանց խումբ:

Վասպուրականի ամբողջ հայությունը՝ Օսմանյան խորհրդարանի անդամ, հայտնի դաշնակցական Ա.Վռամյանի գլխավորությամբ, ոչ միայն դեմ էր ամենափոքր ապստամբական շարժում հրահրելուն, այլեւ «առանձին խոհեմութեամբ եւ հեռատեսութեամբ» գաղտնի պատվիրակներ էր ուղարկում Ս. Էջմիածին եւ Թիֆլիս՝ Հայոց Կաթողիկոսի եւ Ազգային բյուրոյի ներկայացուցիչների մոտ, որպեսզի վերջ տան կամավորական շարժմանը եւ «վերապահ ու խոհեմ ընթացք բռնեն եւ չգրգռեն ոճրագործ իթթիհադական ոճրաձարավ թուրք կառավարութեան»[30]:

Դաշնակցության ղեկավարները արեցին հնարավորը թափ առնող հայ կամավորականների շարժումը կասեցնելու համար, սակայն դա նրանց չհաջողվեց:

Ռուսական բանակի հարձակման հաջողության ժամանակ էլ Վանի հայկական հասարակական-քաղաքական ղեկավարների շրջանում հիմնականում իշխում էր թուրքական կառավարության հետ կապերը չխզելու, նրա դեմ ըմբոստացում թույլ չտալու տեսակետը, քանի դեռ ռուսական զորքերը չէին գրավել այդ վայրերը:

«...Թէեւ մթնոլորտը լեցուած էր խռովութիւններու կանխանշաններով,- նկատում է Հ. Մորգենթաուն, բայց Հայերը ինքնազսպողութեան հիանալի ընթացքով շարժեցան... Հայ կղերը եւ քաղաքական պետերը... ժողովրդին մէջ մտան, նախազգուշացնելով հանդարտութիւն պահել, համբերատարօրէն հանդուրժել ամէն անարգանքի եւ նոյն իսկ ծայրայեղութիւններու, ատով չտալու համար Թիւրքերուն այն առիթը՝ զոր կը փնտռէին... Եթէ նոյն իսկ անոնք մեր մէկ քանի գիւղերը կրակի տան, կ՚ըսէին այդ պետերը, փոխվրէժի մի՛ դիմէք, որովհետեւ աւելի լաւ է որ՝ մէկ քանի գիւղեր ոչնչանան, քան ամբողջ ազգը կոտորուի»[31]:

Երբ ռուսական բանակը, իր կազմում ունենալով Անդրանիկի խումբը, պատերազմի սկզբին գրավեց թուրք-պարսկական սահմանագլխի վրա՝ Վանից ոչ հեռու գտնվող Սարայ գյուղաքաղաքը, Վանում թուրքական իշխանությունները խուճապի մատնվեցին եւ պատրաստվեցին տեղափոխվել Բիթլիս: Այդ օրերին Վանում թուրքական ռազմական ուժ չկար, եթե չհաշվենք 400-ի հասնող ոստիկաններին եւ, ինչպես Արմենակ Եկարյանն է վկայում. «Մերինները կրնային ամեն բան ընել անարգել»[32]:

---

30 **Գր. Ծ. վարդ. Պալաքեան**, Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Զօր. 1914 1920, Ա. հատոր, Վիեննա, 1922, էջ 61: **Յովհ. սա. քհ. Հաճյան**, Հայոց տաժանքի ճամբաներով, Ա. հատոր, Թեհրան, 1965, էջ 374-375:

31 «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի հիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները», էջ 246:

32 «Յուշեր Արմենակ Եկարեանի», էջ 186:

Սակայն,- շարունակում է Ա. Եկարյանը,- «Մեր վրա պարտականություն կծանրանար զգույշ կենալը, եթե քաղաքի մեջ եւ մերձակայքը մենք կրնայինք մեր ուզածը ընել, չէինք կրնար սակայն պաշտպանել գյուղական շրջանները՝ զուրկ ինքնապաշտպանության ամեն միջոցե, կղզիացած շատ տեղ, քրդական ծովու մեջ»[33]:

Վանի ամերիկյան ուսումնական հաստատության միսիոներուհի միս Նեփին վկայում էր, որ հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները «ցոյց տուին գնահատելի խոհեմութիւն եւ իրենց տաքգլուխ երիտասարդութեանը խաղաղեցնելու համար... արգելեցին ընդհարումները եւ հրամայեցին գիւղացիներին լռութեամբ տանել ամէն բան: Խորհուրդ տուին հրկիզուած գիւղերի համար վրէժխնդիր չլինել, որպէսզի իրենց կողմից որեւէ փոխադարձութեամբ ընդհանուր ջարդ առաջ չբերուէր»[34]:

Այսպիսով, չնայած բոլոր դժվարություններին, հայերը կատարում էին իրենց քաղաքացիական պարտքը եւ փորձում էին խուսափել անախորժություններից ու աղետներից:

Սակայն, ինչպես Ջ. Կիրակոսյանն է նկատում, «Վանում գործած ազգային կուսակցությունների մեղքը ոչ թե ապստամբական նախապատրաստությունն էր, այլ, ընդհակառակը, նրան պատրաստ չլինելը, նրանց անկազմակերպ ընթացքը, իրենց կոնկրետ ծրագիրն ու անելիքները չիմանալը, մոտալուտ գալիքի աղոտ պատկերացումը: Վերջին հաշվով նրանք անտեղյակ էին, թե վաղն ինչ է անելու կառավարությունը եւ դրան համապատասխան ինչպիսին պետք է լինի իրենց դիրքը: Նրանց այդ գործելակերպը, ակնկալությունները երիտթուրքական կառավարությունից փաստորեն շարունակվեցին մինչեւ Վանի վրա թուրքական հարձակումը»[35]:

Սարայից ռուսների հետ քաշվելուց հետո, թուրքական կառավարությունն ավելի անզիջող դարձավ: Հայ երիտասարդությունը, տեղյակ լինելով բանակում քրիստոնյա հայ զինվորների ահավոր վիճակին, մերժում էր զինվորագրվել, իսկ կառավարությունը նրանցից պահանջում էր հանձնվել՝ առանց որեւէ պայմանի եւ առանց ապահովության որեւէ երաշխիքի:

Ավելին, կառավարությունը խստորեն հետապնդում էր հայ «դասալիքներ»-ին՝ կազմակերպելով շուրջկալներ եւ խուզարկություններ: Գյուղերում այդ գործը կատարում էին թուրք ոստիկան-զինվորները, որոնք ցուցակներով գյուղից գյուղ էին շրջում, բռնություններ գործադրում՝ պահանջելով հանձնել դասալիքներին: Միաժամանակ, խուզարկում էին տները՝ զենք գտնելու նպատակով: Եթե դասալիքներին չէին գտնում, այրում էին նրանց տները եւ բռնագրավում արտերը:

---

33 Անդ:

34 «Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը», Կ. Պոլիս, 1920, էջ 47:

35 **Ջ. Կիրակոսյան**, Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը, Երեւան, 1965, էջ 265:

Ժանդարմների շուրջկալները երբեմն հասցնում էին խռովությունների եւ զինված ընդհարումների հայերի եւ ժանդարմների միջեւ, որոնց աջակցում էին նաեւ քրդերը: 1914թ. դեկտեմբերից մինչեւ 1915թ. մարտ Վանի զանազան գավառների շուրջ 10 գյուղերում կազմակերպվեցին զինված դիմադրություններ, որոնք ավարտվեցին կամ հայերի փախուստով, կամ էլ «կարգ մը գիւղերու մէջ անխնայ սպանուեցան այր մարդիկ, կիները բռնաբարուեցան, գիւղերը կողոպտուեցան»[36]:

Հայկական 30-40 գյուղերի ժողովուրդը տեղահան եղավ: Այսպես, գերմանական դիվանագիտական փաստաթղթերից մեկը հավաստում է, որ «մարտի սկզբին կոմիսար Ռազիմ բեյը եւ լեյտենանտ Ջեւդեթ բեյը 40 զաբթիներով գալիս են հայկական Կրոնք գյուղը: Մի դասալիքի հետ փոխհրաձգության ժամանակ ժանդարմներից մեկի ձին սպանվում է: Սա վերադառնում է գյուղ, գյուղացիներից վերցնում է մի լավ ձի՝ որպես հատուցում սպանված ձիու դիմաց, ստիպում է իրեն վճարել 40 թուրքական ֆունտ, կրակին է տալիս 25 տուն, գյուղի տղամարդկանց ստիպում ցատկել թրի սայրի վրայով եւ բռնագրավում արտերը: Արտմանում թուրք հրոսակները տեղավորվում են հայերի տներում: Նրանց պարագլուխը, ի նշան շնորհակալության, բռնաբարում է իրեն հյուրընկալողի հարսին...»[37]:

Ի դեպ, զանգվածային դասալքությանը կառավարությունը շատ անգամ մատների արանքով էր նայում: Հայ զինվորները սկսեցին փախչել նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց զինաթափ արին. եւ տարօրինակն այն էր, որ կառավարությունը միջոցներ ձեռք չէր առնում փախուստը դադարեցնելու համար: Օրինակ, Արճակի մէջ, երբ 15 եւ 16-րդ բանակների հայ զինվորներին զինաթափ արին, նրանցից շատերը փախան, սակայն տեղական կառավարությունը տեսնում էր ու լռում: «Տարօրինակ շիլ նայուածքով մը կառավարութիւնը, Վանի մէջ Ջէվտեթը, հայ տարրով էր որ կ'ուզէր զբաղուիլ, երբեք ուշադրութեան չառնելով դասալքութեան երեւոյթի բուն պատճառները»[38]:

Ձեռնարկվեցին միտումնավոր այնպիսի քայլեր, որ քաջալերվեց դասալքությունը, սաստկացվեց միջցեղային ատելությունը, ակնհայտ անջրպետ ստեղծվեց մահմեդականների եւ քրիստոնյա հայերի միջեւ:

Իսկ քաղաքում կառավարությունը պարբերաբար հաշիվ էր պահանջում Հայոց առաջնորդարանից, Օսմանյան խորհրդարանի անդամ Ա. Վռամյանից եւ Հ.Յ.Դ. Վանի ներկայացուցիչներ Արամից եւ Իշխանից՝ առանց որեւէ պայմանի, առանց ապահովության եւ որեւէ խոստումի:

«... Ճէվտէթ պէյ,- նկատում է Ա. Դարբինյանը,- ամէն օր կը կրկնէր իր պահանջները:

---

36 **Ա. Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերէն. Ցուշեր 1890-էն 1940, էջ 157:

37 «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918». դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատ. II, հրատարակությունը եւ ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երեւան, 2008, էջ 300:

38 **Հ. Կոստյեան**, նշվ աշխ., էջ 15:

-Կը պահանջեմ, որ դասալիքները գան յանձնուին:

-Ժամանակ տուէք, որ կարողանանք համոզել դասալիքները, - կը խնդրէին Վռամեան եւ Արամ:

Իրապէս Վռամեանն ալ, Արամն ալ շատ ջանք կը թափէին. որ «չափով մը գոնէ գոհացում տային կառավարութեան պահանջին»[39]:

Արամն ու Իշխանն ամբողջովին կլանված էին ներքաղաքական խնդիրներով, իսկ Ա.Վռամյանը «կը ներկայանար կառավարութեան առաջ անխարդախ թարգման Վասպուրականի ամբողջ ցաւերուն, բողոքներուն, ո՛չ միայն թարգման, այլ պահպանող, յամառ հետապնդող»[40]:

Ա. Վռամյանը Թալյաթին ուղղված 1915 թ. փետրվարի 14-ի վերոհիշյալ ծածկագիր հեռագրում դասալքության համար առաջ էր քաշում երեք պատճառ՝ ա) 24 տարեկանից բարձր տարիք ունեցողների մարզված չլինելը, բ) 24 տարեկանից ցածր տարիք ունեցողների անկարողությունը դիմանալ հանկարծահաս պատերազմի ռազմական ծանր զրկանքներին՝ կապված ուտեստի եւ հագուստի հետ եւ գ) բանակում հայ զինվորների կրոնական խնդիրների անտեսումը եւ արհամարհումը: «Յետին չարագործն անգամ իր մահուան ժամուն իրաւունք ունի կրօնի սփոփանք պահանջելու եւ այդ չի զլացուիր անոր»,- նշում էր Ա. Վռամյանը[41]:

Միաժամանակ նա հիմնավորելով դասալքության քաղաքական, ընկերային եւ կրոնական շարժառիթները՝ մասնավորապես նշում էր. «Հայ դասալիքներու թիւը շատ սահմանափակ էր սկիզբները եւ անհնար չէր այդ անուշան տոկոսն ալ անհետացնել տակաւ... Ատոր հակառակը, աղէտաւոր ու դժբախտ անվստահութիւն մը կառավարութեան կողմէ հայերուն հանդէպ, հայ ժողովուրդի գոյութեան իսկ սպառնացող կազմակերպուած բնոյթ ունեցող կարգ մը դէպքեր, ճիհատի հռչակումը եւ անոր միակողմանի ըմբռնումը՝ եկան դասալքումի երեւոյթին տալու քաղաքական չարաշուք գոյն մը»[42]:

Ըստ Ա. Վռամյանի դասալքության պատճառներն էին՝

ա) Հայ զինվորների եւ հայ ժանդարմների զինաթափումը, որն անմիջապես ստեղծեց քաղաքական անվստահության հեղձուցիչ մթնոլորտ, նպաստեց միջցեղային հարաբերությունների լարվածությանը հայերի ու մահմեդականների միջեւ, բ) Զինաթափված հայ զինվորների օգտագործումը գրաստի փոխարեն, որը վիրավորեց նրանց մարդկային ու ազգային ինքնասիրությունը՝ ստորացնելով նրանց իրենց մահմեդական հայրենակիցների աչքին, գ) Զինաթափված հայերը, գտնվելով մահմեդական զինվորների հսկողության տակ, կամ հարկադրված լինելով անզեն շրջել բորբոքված եւ սպառազինված մահմեդականների շրջանում, վտանգեցին իրենց կյանքը: Ահազանգեր կային

39 **Ա. Դարբինեան,** Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890-էն 1940, էջ 158:

40 **Հ. Կոսոյեան**, նշվ. աշխ., էջ 17:

41 «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թ. 6, էջ 98:

42 Անդ:

գնդակահար, ջրախեղդ կամ դաշունահար եղած եւ անհետ կորած հայ զինվորների մասին, Էրզրումի եւ Պարսկաստանի ռազմաճակատներում, դ) Տարբեր առիթներով զինաթափված հայ զինվորների հեռացումը իրենց գավառներից դեպի անծանոթ շրջաններ, ե) Բոլոր մահմեդականների՝ հատկապես 16 - 60 տարեկան բոլոր քրդերի անխտիր զինումը միլիս անվան տակ եւ ռազմական-ժանդարմական պաշտոնների հանձնումը նրանց, որով նրանք ստացան տիրապետող ու զսպող ուժի իրավունք հայերի հանդեպ, զ) Միլիսների շահատակությունները, կատարված բռնություններն ու սպանությունները Թիմար գավառի հայկական Ալյուր, Խավենց, Ամյուկ, Գավաշի շրջանի՝ Բելու, Ընձաք, Նանիկանց եւ Կարճկանի՝ Եղեգիս գյուղերում՝ Բաղեշի միլիսի ու չերքեզ սպայի ջոկատի կողմից, Մխկներ գյուղի բռնաբարությունները՝ Եոմեր աղայի միլիսների կողմից եւ Պարսկաստան գնալու ժամանակ Բշարե-Չաթոյի 600 հոգուց բաղկացած խմբի կատարած վայրագությունները Մանազկերտի շրջանում, Վանի նահանգի հյուսիս-արեւելյան շրջանի գյուղերում, Մշո դաշտում եւ Սիլվանի (Տիգրանակերտի) 12 հայկական գյուղերում, է) Ծանոթ քուրդ ոճրագործների՝ Մեհմեդ Էմինի, Մուսա եւ Գասըմ բեյերի եւ շատ ուրիշների ներումն ու զինումը եւ նրանց՝ իրենց գյուղերում, կամ հայաբնակ շրջաններում մնալը, ը) Զինված քրդերի մեծ քանակով փախուստը բանակից եւ այդ դասալիքների կենտրոնացումը Վանի ու Բիթլիսի նահանգների լեռնային գավառներում, թ) Համիդիեների մնալը հայաբնակ գավառներում ու նրանց կատարած ավերն ու թալանը Հասան-Թամրանում, Ախոռիկում, Պոդասքեսենում, Հազարայում, Մանտանում, Պստիկ գյուղում՝ Սատըմ բեկի ջոկատի կողմից, եւ ժ) Վերջապես Բաշկալեի, նրա շրջակա հայկական գյուղերի, ինչպես նաեւ եւ Ախոռիկի, Ավզարիկի, Հասան-Թամրանի, Հազարենի ու Դաշ-Օղլուի ջարդերը[43]:

Վերոհիշյալ 10 պատճառները ժողովրդին մղում են պատվի, կյանքի եւ ինչքի ապահովությանը, մի ժողովրդի, որի հանդեպ հռչակվել էր անհավատարմություն եւ անվստահություն՝ էլ ավելի ծանրացնելով նրանց կացությունը հարեւան քրդերի շրջանում: Ա. Վռամյանը կյանքի, պատվի եւ գույքի ապահովության խնդիրը համարում է բնական եւ նվիրական իրավունք եւ մատնանշում, որ կառավարությունը բանականությանը, խղճին եւ առողջ քաղաքականությանը հակառակ կգործի, եթե հայերին պարտադրի անզեն զինվորական ծառայություն, քանի որ այն կսպառնա նրանց կյանքին, իսկ նրանց անպաշտպան ընտանիքներն ամեն վայրկյան ենթակա կլինեն զինված եւ կիսավայրենի քրդերի «արիւնոտ քմահաճոյքներուն»:

Ըստ Ա. Վռամյանի՝ զորակոչից խուսափելը տրամաբանական էր, քանի որ ա) հայերից հավաքած զինվորներին չէին զինում, այլ օգտագործում էին դիրքերը փորելու, պարենը շալակով փոխադրելու գործում, բ) մեծ չափերի

43 «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թ. 6, էջ 98-99:

հարկեր էին հավաքում հայերից եւ գ) շատ հաճախ հայերին բանտարկում ու գնդակահարում էին:

Ա. Վռամյանը փորձում է բացատրել, որ եթե հակառակ ջիհադի կոչին՝ պատերազմից խուսափում էին նույնիսկ մահմեդականները, անիրավություն եւ անարդարություն էր դասալիք անունը տալ հայ զինվորին, «որուն կը զլացուի էական ստորոգելիքը իր պարտականութեան, որ զէնքն է»[44]:

Հաշվի առնելով հայերի դասալքման ընկերային, կրոնական եւ քաղաքական պատճառները, տնտեսական հետեւանքները, հայկական օջախներին սպառնացող վտանգը եւ ավազակությունները՝ Ա. Վռամյանը խոհեմաբար Ջեւդեթին առաջարկում էր. 1) Ջենքի տակ զինվորական ծառայության մեջ պահել բոլոր այն հայերին, որոնք զինվորական պատրաստվածություն էին ստացել 1910-1914թթ., 2) Մինչեւ հայերի եւ կառավարության միջեւ վերավստահության հաստատումը, հայ զինվորներին իրենց գավառներում եւ նահանգներում օգտագործել ժանդարմների պաշտոնում, 3) 24 տարեկանից բարձր՝ զինվորական ծառայություն չանցած զինակոչիկներին ազատել բանակից եւ նրանցից վերցնել միայն չափավոր պատերազմական փրկանք[45]:

Սակայն նրա հեռագիրը մնաց անպատասխան:

Կացությունն իրապես ծանր էր, քանի որ Արամն ու Ա. Վռամյանն առաջին անգամ էին տեսնում այն անջրպետը, «որ կը բաժնէր հռետորական ամպիոնը իրականութենէն: Վռամեան, երբ Ամերիկա կը գտնուէր ու կը լսէր Երկրէն հասնող նկարագրութիւնները այս ու այն տեղ եղած ջարդերու մասին, կրակ ու բոց կը տեղացնէր Համիտի հասցէին, նախատինքներ ու տարափ կը թափէր «ստրկամիտ» հայերու գլխուն վրայ. որոնք չէին միանար իրենց՝ սուլթանական գազանութիւնները սանձելու: Սակայն այսօր Վռամեան Պոսթոնի մէջ չէ, այլ «յեղափոխականացած» Վանի մէջ, ուր ի՞նքն է, որ «կը ստրկանայ» եւ խոհեմութիւն կը քարոզէ...»[46]:

Ա. Վռամյանի «աննկուն եւ մեթոտիկ աշխատանքներով ու յարաբերական գործերով» աչքի ընկնող դիվանագիտական այս գործունեությունը, որ տեւեց մինչեւ 1915թ. ապրիլի 3-ը, եւ որի արդյունքում բացահայտվեցին ջեւդեթյան սադրանքներն ու դավերը, տարբեր կերպ է գնահատվել կուսակցական պատմագրության մեջ: Դաշնակցական պատմագրությունը, բարձր գնահատելով անվեհեր երեսփոխանի թափած ջանքերը, նրա գործունեության ամբողջական գնահատումը թողել է ապագային, «այն ատեն միայն, երբ լոյս կ՚ընծայուին իր յիշատակագրերը, հեռագրերը, պահանջագրերը, օր օրին ունեցած յուշատրերի արձանագրութիւնները»[47]:

---

44 Անդ:

45 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, գ. 416, թ. 54-58, նաեւ «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թ. 6, էջ 100, նաեւ **Օն. Մխիթարեան,** Վանի հերոսամարտը, էջ 28-34:

46 **Ա.Դարբինյան**, նշվ. աշխ., էջ 158:

47 **Հ. Կոստյեան**, նշվ. աշխ., էջ 15:

Իսկ ռամկավարները հեգնանքով այն կոչել են «խոհեմ» եւ «ողբացեալ» Վռամյանի «նրբամիտ դիւանագիտութիւն»[48]:

Դասալքությունից հետո, հայ ժողովուրդը հայտարարվեց դավաճան, եւ հայ զինվորներին սկսեցին զանգվածաբար զինաթափ անել: Ահա «այն երեւոյթը, որ եկաւ վերջնականապէս քակելու հանգոյցը, սկիզբը դնելու այն հալածանքներուն, որոնք յանգելու էին հայ ժողովրդի տարեգրութեան մէջ նմանը չունեցող ջարդերին ու տեղահանութեանը»[49]:

Այսպես, Բերկրիում զինաթափ արեցին չորս, Արճակում՝ 15 եւ 16-րդ, իսկ Խոշաբում՝ 17 եւ 18-րդ թաբուրների զինվորներին, որոնք հիշյալ թափուրներում կազմում էին բավականին մեծ տոկոս: Այս ձեւով զինաթափ արվեցին նաեւ մյուս զորամասերի հազարավոր հայ զինվորներ:

Զինաթափ անելուց հետո թուրք զինվորները եւ ընդհանրապես յուրաքանչյուր մահմեդական իրեն իրավունք էր վերապահում նախատել, հայհոյել, ծաղրի առարկա դարձնել հայ զինվորներին: Չէ՞ որ նա կառավարության վստահությունն էր կորցրել եւ դարձել էր խոցելի:

Զինաթափ անելուց հետո հայերից կազմեցին, այսպես կոչված, «ամալիա թաբուրներ» կամ բանվորների գումարտակներ: Նրանց աշխատեցնում էին ճանապարհների վրա՝ կարգի բերելու ուղիները, քշում էին դիրքերը՝ հարկադրելով խրամատներ փորել կամ ստիպում էին գրաստի դեր ստանձնել՝ մեջքի վրա կրելով զորքի պաշարը: Մի խոսքով, նրանց կատարել էին տալիս բոլոր այն ծանր աշխատանքները, ինչ որ պահանջվում էր պատերազմի ու թուրքական բանակի համար:

Զինաթափ անելուց հետո փոխվեց նաեւ «ամալիա թաբուրների» հայ զինվորների ապրելակերպը: Նրանք զրկվեցին հագուստ ստանալուց եւ, որպես բնակարաններ, նրանց հատկացվեցին գոմերն ու հարդանոցներն՝ առանց անկողինների ու վերմակների: Հայ զինվորներին տալիս էին միմիայն հաց, այն էլ ոչ կանոնավոր կերպով: Հաճախ հացի փոխարեն տալիս էին ալյուր, որից հայ զինվորը պիտի խմոր պատրաստեր եւ հաց պիտի թխեր: Սակայն վառելիք ու թոնիր չկար: Կատարել ամբողջ օրը ծանր աշխատանք, չունենալ հանգստի տեղ, հագուստ, եւ օրն անցկացնել դատարկ ստամոքսով՝ հեշտ չէր:

Ռուսական զորքերի՝ թուրքական հող մտնելուց հետո հայ զինվորների նկատմամբ կատարված այս դեպքերը թեթեւ չարիքներ էին, շուտով տեղի ունեցան մեծ չարիքներ, որոնք նվիրագործվեցին ջիհադի հայտարարումով: Թուրք միլլիի զինվորները, որոնք ուղեկցում էին զինաթափված հայ զինվորներին, մասնավոր եւ գաղտնի հրաման ստացան կոտորելու նրանց: Թե՛ զէնքի տակ եւ թե՛ աշխատանքների մեջ այս ու այն տեղ, այս ու այն պարագաներում, հայ զինվորներին սկսեցին գնդակահար անել ու սպանել: Դրանով

48 **Ա.Դարբինյան**, նշվ. աշխ., էջ 157:

49 **Ա-Դո**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թւականներին, էջ 96:

սկսվում են հայ զինվորների անհատական եւ խմբակային սպանությունները՝ Օսմանյան կայսրության խուլ անկյուններում[50]: Այս ոճիրը, որը գնալով ծավալվեց ու ընդհանրացավ, կատարվում էր երբեմն բացարձակ եւ երբեմն էլ խմբական ձեւով: Քրդերն ուղղակի զինվորական ճամբարներում էին կոտորում հայ զինվորներին:

Օրինակ, 1914թ. դեկտեմբերի սկզբին Քեոփրի-Քեոյի մօտ տեղի ունեցած ճակատամարտից հետո, երբ թուրքական զորքերը պարտություն կրելով փախուստի դիմեցին, Եղան գյուղում պատսպարվեցին 50 հայ զինվոր: Չնայած այն բանին, որ փախուստի էին դիմել նաեւ շատ թուրք զինվորներ, բայց կարգադրություն եղավ, եւ գնդակահարվեցին միայն հայերը: Այս խմբակային սպանությունը, որը կատարվեց մեկ վիրավոր հայ սպայի ներկայությամբ, տեղի ունեցավ առանց դատավարության եւ առանց մեղադրանքի:

Այսպիսի խմբական սպանություններ կատարվեցին նաեւ Խոշաբի եւ Արճակի շրջաններում[51], իսկ հատ-հատ սպանություններ կատարվում էին ամեն օր եւ ամեն տեղ, առանց առիթի: Թե այս երեւույթն ինչպիսի ծավալ ստացավ, երեւում է հետեւյալ փաստից:

Պարսկական սահմանի մոտ գտնվող Կոթուր ավանի թուրքական զինվորական հիվանդանոցի հայ բժիշկ Պողոս Փալտբեքյանը դեկտեմբերի վերջին շարժուն ժանդարմական գնդի հրամանատար Քյազիմ բեյից ստացավ մի նամակ, որտեղ նշվում էր, որ «Ճամբաների վրայ քիւրդերը յարձակւում են հայ զինւորների վրայ եւ սպանում են նրանց, ուստի հայ զինւորներին առանց տաճիկ զինւորների ընկերակցութեան ճամբայ մի հանէք, ես ափսոսում եմ հայերին, նրանք հաւատարիմ, ընդունակ եւ օգտակար տարր են, թէեւ նրանց մէջ վատ մարդիկ էլ կան»[52]:

Խոսքը տուն ուղարկվող վիրավոր հայ զինվորների մասին էր: Թուրք զինվորականն, իր բարեկամ հայ բժշկին այս նամակը գրելով, անշուշտ, արձագանք էր տվել իր ներքին ձայնին:

Նույն հայ բժիշկը Կոթուրից Վան գալու ճանապարհին տեսել էր, թե ինչպես զինաթափ արած զինվորներին տանջում էին ուժերից վեր ծանրոցներ բեռնել տալով, անգթորեն ծեծում էին փայտերով եւ օրերով թողնում էին քաղցած: Նա տեսել էր ճանապարհին այնպիսի դեպքեր, որ պատմելիս, ինչպես վկայում էին ականատեսները, չէր կարողանում զսպել արցունքը:

Այսպիսով, կուսակցությունների եւ Կ. Պոլսի պատրիարքարանի «խոհեմության» կարգախոսը կատարելապես ապակողմնորոշեց արեւմտահայությանը, թուլացրեց նրա զգաստությունն ու մարտական ոգին, որից օգտվեցին երիտթուրքերը եւ հանուն «խոհեմության», դասալքության պատրվակով զի-

50 Ընդհանուր առմամբ Մեծ Եղեռնի տարիներին ոչնչացվեց ավելի քան 60 հազ. հայ զինվոր. **Ա. Համբարյան, Ստ. Ստեփանյան**, Հայոց ցեղասպանությունը, Երեւան, 1995, էջ 15:

51 «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թ. 6, էջ 91:

52 **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 101:

նաթափ արեցին վասպուրականցի զորակոչիկներին ու քստմնելի ձեւով կոտորեցին:

Հալածանքներ Վասպուրականի հայ պաշտոնյաների դեմ. Առաջին աշխարհամարտի Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունների սկզբից եւեթ Օսմանյան կառավարությունը Վասպուրականի հայերի նկատմամբ սկսեց պետական մի հալածանք, որն արտահայտվում էր զանազան առիթներով:

1914 թ. օգոստոսի երկրորդ կեսից հալածանքներ սկսվեցին Վասպուրականի հայ պաշտոնյաների դեմ, որը ծնեց անվստահության եւ կասկածի մի նոր առիթ: Հայ պաշտոնյաները, որոնց թիվը մեծ չէր, եւ որոնք շատ չնչին տոկոս էին կազմում Վանի հայաբնակ շրջաններում եւ պետական համակարգում, պաշտոններ ստանձնելու իրավունք էին ստացել միայն 1908 թ. սահմանադրությունից հետո: Առանց պատճառաբանությունների՝ նրանք ոչ միայն ազատվեցին իրենց զբաղեցրած պաշտոններից եւ հեռացվեցին ասպարեզից, այլեւ ենթարկվեցին խիստ հալածանքների:

Սկզբում պաշտոններից հեռացվեցին պատասխանատու հայ գայմագամները, որոնց ներկայությունը կարող էր այս կամ այն ազդեցությունն ունենալ ժողովրդի վրա: Այսպես, առանց որեւէ հիմնավորման պաշտոնանկ արվեց Վանի վիլայեթի Ալշավազ գավառի գայմագամ Պետրոս բեյը, եւ նրա տեղը նշանակվեց Նաջի բեյ վանեցին:

Սակայն պաշտոնազուրկ էին արվում նաեւ այնպիսիները, որոնք համարյա ազդեցություն չունեին կառավարության գործունեության ընթացքի վրա: Այսպես, կառավարությունը Վանի 3 հայ ոստիկանների՝ Պողոս Տեր-Պողոսյանին, Շահեն Փրթոյանին եւ Արմենակ Շատախցյանին, առաջարկեց տեղափոխվել Մոսուլ, որոնցից առաջին երկուսը համաձայնեցին[53]: Սակայն, կառավարությունը դրանով չբավարարվեց, իր վերաբերմունքն արտահայտեց նաեւ նոր պաշտոնյաներ նշանակելու գործում:

Դրա համար կառավարությունը, ամրապնդելով իր դիրքերը տեղերում, կարեւոր պաշտոնների առաջ քաշեց կատաղի հայատյացների: Այդպես, 1914 թ. սեպտեմբերին Վանի կուսակալ նշանակվեց արյունարբու Ջեւդեթ բեյը[54], իսկ Վանի նախկին կուսակալ կրթված, «հաշտասեր» եւ արդարամիտ Թահսին բեյը նշանակվեց Էրզրումի կուսակալ[55]: Ավանցի ճանապարհին կազմակերպված ողջերթի ժամանակ, որին ներկա էին պետական պաշտոնյաներ, ազգային ներկայացուցիչներ, երեսփոխան Ա. Վռամյանին եւ ուրիշների,

53 **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 76:

54 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 20, թ. 29:

55 Թահիսին փաշան թուրքական պաշտոնատարներից ամենալուսավորված դեմքերից մեկն էր: Նրա օրոք «Քաղաքին լաւագոյն մասին մէջ բնակուող հայերուն եւ իսլամ թաղերու տղմուտ հիւղակներուն մէջ բնակուող թիւրքերուն եւ քիւրտերուն միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները տանելի կերպով գոհացուցիչ եղած են բազմաթիւ տարիներու ընթացքին». «Ամերիկեան դեսպան Մր. Մորգենթաուի յիշատակները...», էջ 244:

Թահսին բեյը, շնորհակալություն հայտնելով Վանի հայերի զորակոչին գործուն մասնակցություն ցուցաբերելու առումով, նշեց. «Ցաւով կը բաժնուիմ ձեզմէ եւ այս երկրէն, որու վերաշինման, ժողովուրդներու բարի դրացիութեան եւ յառաջդիմութեան ջերմ փափաքող մ'էի: Կերթամ, բայց ձեզ հետ պիտի լինիմ, մանաւանդ որ իմ յաջորդս Ջէվտէթ պէյ, ահա որ հոս է (ցոյց տալով), թէեւ երիտասարդ, բայց անպայման վստահ եմ իրեն թէ պիտի շարունակէ այն գործերն եւ աշխատանքները, զոր կիսատ թողուցի.., Մնաք բարով, հայրենակիցներ»[56]:

Այդ մասին Հ. Կոսոյանը հիշում է. «Մեկնող կուսակալի խօսքերը, թէ Ջէվտէթը իրեն յաջորդն է, ճնշող տպաւորութիւն թողուց բոլորիս վրայ: Բնական նախազգացում մը կը խօսէր մեր սրտերուն, թէ կացութեան սա փափուկ եւ անստոյգ վիճակին մէջ, սեւ մը պիտի բերէ այս երկրին: Կը զգայինք, թէ Ջէվտէթը ոճրագործ մ'է, անկէ բարիք, խելօք վարչականութիւն սպասելն անմտութիւն է: Չէ՞ որ զինք պատանի հասակէն կը ճանչնայինք»[57]:

Ջեւդեթը Վանի 1898-1906 թթ. կառավարիչ, երբեմնի կուսակալ ալբանացի Թահիր փաշայի որդին էր եւ Էնվեր փաշայի քեռայրը: Այդ էր պատճառը, որ հայ իրականության մեջ կային մարդիկ, որոնք բարձր էին գնահատում նրա անցյալը: Այսպես, Ա. Դարբինյանը նշում է, որ «Այս Ճէվտէթ պէյը զաւակն էր ալպանացի Թահիր փաշային, որ ինը տարի խաղաղութեամբ կառավարած էր Վանի նահանգը: Իր հօրը ազդեցութեան տակ Ճէվտէթ երիտասարդ տարիքէն բարեկամական վերաբերում ունէր դէպի հայերը: Ինչպէս ասկէ առաջ յիշած եմ. Վարդգէսին բանտին մէջ այցելութեան կու գար: «Ազնիւ, յեղափոխական է»,- ըսած էր ինձ Վարդգէս անոր մասին»[58]: Սակայն, նա աչքի էր ընկնում իր հարափոփոխ նկարագրով. «Պահ մը բարեացակամ ոչ-Իսլամներուն հանդէպ, յաջորդ պահուն թշնամական, կեղծաւոր, դաւող եւ վայրագ, համաձայն իր ցեղին յոռեգոյն աւանդութիւններուն: Ան կ'ատէր Հայերը, եւ սրտովին համակիր էր հայկական խնդիրը լուծելու համար կազմակերպուած վաղեմի թրքական ծրագիրին»[59]:

1906-1908 թթ. Վանի կուսակալ Ալի բեյի օրոք (որը դաժան քաղաքականություն էր վարում հայերի նկատմամբ եւ որը Բաթումում սպանվեց մի հայի ձեռքով) Ջեւդեթը եղել էր Սարայի գայմագամը, սահմանադրությունից հետո Բաշկալեի մութեսարիֆը, իսկ 1914 թ. վերջին՝ Վան-Վասպուրականի նահանգապետ-կուսակալը՝ վալին, իրականում՝ «ի սրիկա դէմք»[60]:

Դեռ պատերազմից առաջ նա աչքի էր ընկել իր թունոտ ատելությամբ ու

56 **Հ. Կոսոյեան**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, էջ 9:

57 Անդ:

58 **Ա. Դարբինյան**, նշվ. աշխ., էջ 156:

59 «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի Յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները», էջ 247:

60 **Ա-Դռ,** նշվ. աշխ., էջ 76:

ոճրագործությամբ հայերի նկատմամբ: Նա էր, որ հայերին տանջում էր ամենաբարբարոսական ձեւերով: Դավոյի՝ 1908 թ. դավաճանության ժամանակ Սարայ գավառի գայմագամ Ջեւդեթը, Աբաղայի Խաչան գյուղում առեւտրով զբաղվող վանեցի Պետրոս Փիրումյանին բռնելով որպես հեղափոխականի, ենթարկում է դաժան տանջանքների, իսկ վերջում երկու կատու է գցում նրա վարտիքը, կատուներին ծեծում, որոնք էլ ծվատում են Պետրոսին, որը հաջորդ օրը մահանում է: Ամբողջ երկրում Ջեւդեթը հայտնի էր որպես «բաշկալեցի պայտառ», քանի որ խոշտանգումների այդ գիտակը, Հ. Մորգենթաուի բնորոշմամբ, «հայտնագործել էր այն, ինչն, անշուշտ, գլուխգործոց էր, այն ամենից լավագույնը, ինչ հայտնի էր նախկինում. հենց նա էր ձիու պայտերը մեխում իր հայ զոհերի «ոտնաթաթերին»[61]: «Դավոյի գործով» նա 12 տարեկան մի հայ տղայի՝ Սարգսին, ծեծում է, պայտում եւ տանջամահ անելով՝ ստիպում, որ նա ցույց տա զենքի պահեստները: Այստեղից էլ նրա «Նալբանդ գայմագամ» կամ «Ղասաբ Թափուրի» մականունը: Ջեւդեթի մասին Ա. Մանդելշտամը հիշում է.«Հենց նորին գերազանցությանն (խոսքը Ջեւդեթի մասին է - Ավ. Հ.) է պատկանում խոշտանգումների երկու ձեւի գյուտի պատիվը, դրանցից մեկը հայերի ներբաները պայտելն է, ինչպես գրաստներին, նորություն, որի համար նրա գյուտարարն արժանացել է «բաշկալեցի պայտար» մականվան, մյուսը կատուներով խոշտանգելն էր, որի դեպքում կատուներ էին խցկում խոշտանգվողների հագուստի տակ եւ ապա ծեծում կենդանիներին, որ նրանց ստիպեն իրենց ատամներն ու ճանկերը խրել զոհի փորոտիքը»[62]:

Ա. Կեորկիզյանը նկատում է, որ «այդ հոգեբանութիւնն եւ չարագուշակ համարումը ունէր վանեցին Ջէվտէթի անձին նկարագրին ու հակումին նկատմամբ: Դա արդիւնք էր տարիներու ընթացքին Վանի կուսակալութեան այս կամ այն գաւառին մէջ անոր կատարած այն բարբարոս քստմնելի եղեռնագործութեանց, զորս պարբերաբար նրբացած ու կատարելագործուած, երեւան բերած ու գործադրած էր Ոստանի, Բերկրիի, Ապաղայի, Նորտուզի եւ վերջէն ալ Պաշգալէի մէջ: Մարդիկ կենդանի պայտել, անլուր չարչարանքով մահացել, շամփրել ու ամորձիքները տրորելով սպանել՝ սիրելի էին իր բնագդին, հրճուանք՝ իր հոգու: Ոճիրներու սիրահար հրէշ մըն էր Ջէվտէթը, գազան եւ անսիրտ: Ահռելի հակասութիւն իր վայելուչ արտաքինի եւ թաթար առնաւուտ ներքինի միջեւ: Վանեցիք ամենայն իրաւամբ զայն կը ճանչնային «նալպանտ միթէսարիֆ»: Վանի մամուլն անգամ հրապարակով այդ սեւ տիտղոսը տուաւ անոր դեռ երկու տարի առաջ, երբ Պաշգալէի մէջ միթէսարիֆութեան պաշտօն ունէր:

Ահա թէ ինչու Վասպուրականի հայութիւնը առանձնապէս գէշ նախազ-

61 «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու Մ.Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երեւան, 1991, էջ 685:

62 Անդ, էջ 597-598, նաեւ **A. Mandelstam**, Le sort de l'Empire Ottoman, Lausanne-Paris, 1917, էջ 248-278:

գացումով լեցուեցաւ, երբ Ջէվթէտը ստանձնեց կուսակալութեան պաշտօնը այդ ծանր օրերուն»[63]:

Նա բարբարոս բնավորության տեր անձնավորություն էր: «Անիկա ոճիրներու սիրահար հրեշ մըն էր պարզապէս, գազան ու անսիրտ»[64]:

Այժմ այդ Ջեւդեթն առաջ էր քաշվում նահանգապետ-կուսակալի պաշտոնի, այն էլ հայաշատ Վանում, որպեսզի սրախողխող աներ անմեղ բնակչությանը: Ըստ Հ. Մորգենթաուի՝ կասկած չէր հարուցում, որ Ջեւդեթը, որն իր կյանքի մեծ մասը անց էր կացրել Վանում, Վան էր եկել հայերին բնաջնջելու հրահանգով: «Այս կարգադրութիւնը,- գրում է Հ. Մորգենթաուն,- ինքնին շատ վրդովիչ էր: Թիւրք պաշտօնէութեան մէջ միշտ գտնուած է փոքրամասնութիւն մը մարդոց, որոնք հաւատացած չեն թէ՝ ջարդը պետական քաղաքականութիւն մըն է, եւ որոնց կարելի չէ վստահիլ որ ճշդապահօրէն կը կատարեն կեդրոնի Կառավարութեան ամէնէն արիւնռուշտ հրահանգները: Հետեւաբար, ամէն անգամ որ ջարդեր ծրագրուած են, սովորութիւն եղած է նախ տեղափոխել այդ կարգի «անվստահելի» պաշտօնեաները եւ անոնց տեղը դնել աւելի վստահելի նկատուած անձեր»[65]:

Սկզբում Ջեւդեթը բացակայում էր Վանից, քանի որ Կովկասյան ճակատում ստանալով Պարսկաստանի սահմանագլխի թուրքական զինված ուժերի կրկնակի տիտղոսներ՝ կռվում էր ռուսների դեմ: Սակայն 1915թ. գարնանը ռուսների նահանջից հետո փորձեց իրագործել իր հայաջինջ ծրագիրը:

Վանեցին նկատել էր, որ Ջեւդեթը փոխել էր իր վերաբերմունքը հայերի նկատմամբ: «Եթէ այդ սկզբին հոգեբանական տպաւորութիւն մ'էր, նախազգացում, յետոյ անմիջական արգասիք էր արդէն պետական եւ ջէվտէթեան ռէժիմին, որ այլեւս մերկապարանոց փաստ էր, թէ Վասպուրականի մէջ հայութիւնը իր կատարած բոլոր զոհաբերութիւններով կը նկատուի անվստահելի եւ վնասակար»[66] :

Թուրք զինվորականությունը, տոգորված իթթիհատական շովինիզմով եւ «Էնվերյան երազներով», զորահավաքի ժամանակ ստեղծել էր խայտաբղետ, այլազան ու անկիրթ մի զինվորականություն, որի մեծ մասը կենտրոնացել էր պատերազմական ռազմաբեմում, իսկ մյուս մասը՝ «միլիս» անունով, դեռ մնում էր գավառներում:

Վասպուրականի հայերի զանգվածային կոտորածներն ու տեղահանությունները եւ բանակ կանչված հայ զինվորների զինաթափումն ու խմբակային կոտորածները մեծ մասամբ կատարվում էին հենց այդ միլիսների զինվորների կողմից:

---

63 **Հ. Կոստյեան**, նշվ. աշխ., էջ 9-10:

64 **Վեր. Ա. Կէօրկիզեան**, Վասպուրականի Հերոսամարտը, 1919 ապրիլ 7 – 1915 մայիս 7, Ցոյս եւ լոյս, Պէյրութ, 1965, էջ 83:

65 «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի Յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները», էջ 246:

66 **Հ. Կոստյեան**,նշվ. աշխ., էջ 13:

Թուրքական կառավարությունը միաժամանակ շարժման մեջ դրեց նաեւ Վանի վիլայեթի համիդեական գնդերը, որոնց հրամանատարն էր Աբդուլ Գատը բեյը: Միաժամանակ հրամաններ ուղարկվեցին Նորդուզի, Շատախի, Գավաշի, Կարճկանի, Խիզանի, Մոկսի եւ Սպարկերտի քուրդ բեյերին, որ կազմակերպեն կառավարական զենքերով զինված քրդական խմբեր[67]:

Զինված քրդերը եւ բաշիբոզուկ միլիսները, մնալով իրենց տեղում, կառավարական գաղտնի թելադրանքով սկսեցին սանձարձակ շահատակությունները եւ ահաբեկումները, որով հայերի համար ստեղծվեց իրական անապահով վիճակ:

Մեծ հոգածությամբ կազմակերպվեցին նախկինում իրենց «սխրագործություններով» եւ վայրագություններով աչքի ընկած չեթեական-ավազակային խմբեր (քրդերից, չերքեզներից, լազերից եւ այլն), որպեսզի հեշտացվի հայերի բնաջնջման գործը, ինչպես նաեւ խռովություններ բարձրացվի Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում: Պահեստի զորքերի շարքերից ընտրում էին ամենավարժ եւ աչքի ընկնող զինվորներին եւ նրանցից կազմում էին առանձին խմբեր, որոնց կոչումը լինելու էր՝ կատարել ամենահանդուգն ձեռնարկումները: Այդպես, երիտթուրքերի ներկայացուցիչ Նաջի բեյը, որը Կ. Պոլսից Էրզրում եկավ դաշնակցության ներկայացուցիչների հետ բանակցելու, Էրզրումի եւ Վանի զորքերի միջից ընտրեց 3000 լավագույն զինվորներ եւ այդ հրոսակախմբի գլուխ անցած՝ շարժվեց դեպի Պարսկաստան՝ ռուսների դեմ խռովություններ եւ հարձակումներ կազմակերպելու համար[68]: Իսկ Քյազիմ բեյը Սեյար եւ Սապըթր նորակազմ զորաբաժիններով անցավ Սարայ եւ Բաշկալե:

Հայերին կոտորելու համար թուրքական կառավարությունը բանտերից ազատեց եւ ներում շնորհեց ավազակ եւ մարդասպան քուրդ եւ թուրք քրեական հանցագործներին, գողերին ու ավազակներին, «իսկ շատ շատեր, որոնք իբրեւ փախստական կը հետապնդուէին, իջան լեռներէն եւ ընդունուեցան գրկաբաց»[69]: Նրանք մտան միլիսների մեջ, եւ նրանցից կազմեցին ոստիկանական հրոսակախմբեր: Դրանցից մեկը (մոտ 600 հոգի) Վանում գլխավորում էր քուրդ ցեղապետ Բշարե Չաթոն, որը հարձակումներ էր գործում հայկական շրջանների վրա, կոտորում ու կողոպտում էր մարդկանց, բռնաբարում կանանց: Այդպես, նա հասնելով Արճեշի շրջանի Հասպըսիկակ գյուղը, որտեղ ժողովուրդը նրան տրամադրում է բնակարան, վառելիք եւ ուտեստ: Նա տեղավորվում է հայ ընտանիքներից մեկում, կերուխում անում եւ վերջում էլ պահանջում, որ տանտերը՝ Մեդրակն իր կնոջը իրեն տրամադրի: Տանտերը, իհարկե, չի համաձայնում, բայց դա շատ ծանր է նստում նրա վրա, ընդհուպ մինչեւ շիկացած շամփուրներով ձեռքերն ու դեմքը դաղելը:

67 Տեմ անդ:
68 Տեմ **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 80:
69 Տեմ **Հ. Կոստյեան**, նշվ. աշխ., էջ 13-14:

Նմանատիպ գործողություններ է նա կատարում նաեւ Բերկրիի Գյուզակ, Գործոթ եւ Արճակի Տաղվերան գյուղերում: Այս ամենը վկայում էր, որ «նոր սանկցիա է ստանում հին բարբարոս ռէժիմը, նորոգործում է անցած օրերի բարբարոս գործողութիւնը»[70]:

Հայերի կոտորածը կանխվում էր միայն այն չափով, որ չափով ռուսական բանակն իր առաջխաղացման ճանապարհին գրավում էր այս կամ այն հայկական բնակավայրը, շրջանը եւ այլն: Եւ ընդհակառակը, հայերի կոտորածը սաստկանում էր այն վայրերում, որտեղից ռուսական բանակը, պատերազմական հանգամանքների թելադրանքով, նահանջում էր, իսկ հայ բնակչությունը միշտ չէ, որ տեղյակ էր լինում այդ նահանջին եւ չէր հասցնում շարժվել նրա հետ միասին[71]:

Ջիհադի գործադրումը Վանում. Ինչպես Բիթլիսի եւ Էրզրումի, նույնպես եւ Վանի նահանգի մահմեդական ազգաբնակչությունը, որը համակարծիք չէր սկսված պատերազմին եւ նախազգում էր իր պետության քայքայումը եւ չէր տարակուսում, որ Ռուսաստանի հաջողությունը պատերազմում կասկածից վեր էր, անգիտակից ձեւով մնում էր անհոժար եւ շվարած:

Այս իրավիճակում, զորահավաքից 90 օր հետո, Սեւ ծովում տեղի ունեցած նավային միջադեպից եւ Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելուց հետո, Թուրքիան հռչակեց ջիհադ՝ սրբազան պատերազմ[72]:

1914թ. նոյեմբերի 11-ին Ստամբուլի սուլթան Մեհմեդ Ֆատիխի մզկիթում, շեյխ-ուլ-իսլամ Հայրի էֆենդին ընթերցեց 5 ֆետվ (հրովարտակ) եւ հռչակեց սունի մահմեդականների ջիհադ՝ «սրբազան պատերազմ Անտանտի դեմ»[73]:

1914թ. նոյեմբերի 13-ի հատուկ հրովարտակով Անտանտի երկրներին ջիհադ հայտարարեցին նաեւ շիա մահմեդականների բարձրագույն հոգեւոր ներկայացուցիչները[74]:

Մզկիթներում, տներում եւ հասարակական վայրերում, թուրքերի, քրդերի եւ բոլոր խավերի մեջ ծավալվեց պետական եւ մասնավոր քարոզչություն:

Ջիհադին մասնակցելու էին հրավիրվում ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ տարածաշրջանի այլ մահմեդականները:

Պատերազմի հայտարարությամբ եւ ջիհադի հրապարակումով միանգամից փոխվեց դրությունը Վանում, եւ ինչպես Հ. Կոսոյանն է նկատում՝ «ստեղծուեցաւ քաղաքական աւելի փափուկ, աւելի վտանգաւոր կացութիւն»[75]:

Այն ակներեւաբար, խորթություն եւ թշնամանք հրահրեց մահմեդական

70 **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 103:
71 Տես **Ա. Եսայան**, Հայկական հարցը եւ միջազգային դիվանագիտությունը, Երեւան, 1965, էջ 78:
72 **Հ. Կոսոյեան**, նշվ. աշխ., էջ 11:
73 Տես **Мустафа Кемаль**. Путь новой Турции, т. IV, М., 1934, էջ 350:
74 Տես **Е. Ф. Лудшувейт**, նշվ. աշխ., էջ 60:
75 **Հ. Կոսոյեան,** նշվ. աշխ., էջ 13:

եւ քրիստոնյա ազգաբնակչության միջեւ: «Մոլեռանդ թուրք ու քուրդ տարրերը, հրահրուած ճիհատով, թոյնով եւ ատելութեամբ լեցուեցան քրիստոնեայ բնակչութեան դէմ, մասնաւորապէս հայ տարրերի դէմ»[76]:

Ահա թե ինչ էին պատմում Վանում զորակոչի պատճառով պահակ-ոստիկանության մեջ ծառայություն անցած վանեցիները, որոնք «պատահականորեն ներս կմտնեն Վանի Ուլու ջամ» (կենտրոնական մզկիթ)[77]: «Սովորական շրջագայութիւն կը կատարէինք, առաջնորդութեամբ թուրք տասնապետի մը: Ցուրտի եւ յոգնածութեան պատճառաւ ներս մտանք մզկիթը, ուր հոծ բազմութիւն մը կար: Ամէնքը երկիւղածութեամբ կը լսէին քարոզիչը, որ ճիհատի բացատրութիւնը կուտար իր ունկնդիրներուն: Անոր խօսքերէն թոյն եւ արիւն կը կաթէր: «Միւսիւլման չէ նա եւ անհաւատներէն աւելի վատթար, որ սուր չի վերցներ մեր խալիֆայի սուրբ հրամանի համար, մեր երկիրը քանդող գեաւուրներու դէմ: Մեր թշնամիները եւ այս երկրի մէջ կան եւ դուրսը, բայց պէտք է ատոր համար ձեր աչքերը լայն բանաք, լաւ խելամուտ ըլլաք կրօնի թշնամիներու բոլոր գործերուն»: Այս միջոցին կարդաց թուղթ մը, որու բովանդակութեան ինչ ըլլալը չհասկցուեցաւ, որովհետեւ աւելի արաբերէնի կը նմանէր: Բայց «միսիլման», «խրիսթիան» եւ «գեաւուր» բառեր ուշադրութեան կը զարնէին: Այդ պահուն մեր տասնապետը հրաւիրեց մեզ մեկնիլ եւ մենք բոլորովին ճնշուած եւ խռովայոյզ հեռացանք: Այն տպաւորութեան տակ ենք, թէ **անոնց այնքան պատերազմը կարծես չի հետաքրքրեր, որքան ներքին հաշիւները մաքրել կ՚ուզեն** եւ թուրք ժողովուրդը ատոր կը պատրաստեն»[78]:

Ստեղծվեց «հեղձուցիչ քաղաքական մի մթնոլորտ», «խճճված հարաբերությունների անքակտելի մի հանգույց», որի անմիջական հետեւանքները սկսեց կրել Վասպուրականի հայությունը:

Հետագայում, Վասպուրականի ջարդարարության համար կիրառված մահմեդական մոլեռանդության փորձն օգտագործվեց նաեւ այլ շրջաններում: Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարության արխիվում ֆրանսահայ նշանավոր պատմաբան Արթուր Բեյլերյանի հայտնաբերած փաստաթղթերից մեկը հաստատում է, որ 1915 թ. հունվարի սկզբին տեղի ունեցած իթթիհատի գաղտնի ժողովի կողմից ընդունված «10 հրահանգ»-ներից 3-րդում նշվում էր, որ անհրաժեշտ է «գրգռել մահմեդական հասարակությանն այն մեթոդներով, որոնք կիրառվել են այնպիսի նահանգներում, ինչպես Վանը, Էրզրումը կամ Ադանան, որտեղ հայերը իրենց դեմ հարուցեցին մահմեդականների ատելությունը, եւ առաջ բերել կազմակերպված ջարդ...»[79]:

---

76 Անդ, էջ 11:

77 Նախկինում այն եղել է Վանի Ս. Սիոն Գագկաշեն տաճարը:

78 **Հ. Կոսյեան,** նշվ. աշխ., էջ 11-12: Ընդգծ.՝ Ա. Հ.

79 Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր I, աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, Երեւան, 2005, էջ XXIX-XXX: